

Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2021թ. փետրվարի 25-ի թիվ 38-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հաշվեքննության
հիմքը**

ՀՀ հաշվեքննիչ պալատի նոյեմբերի 20-ի թիվ 184-Ա որոշում

**Հաշվեքննության
օբյեկտը**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

**Հաշվեքննության
առարկան**

Արտակարգ իրավիճակների նախարարության 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն

**Հաշվեքննությունն
ընդգրկող
ժամանակաշրջանը**

2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը

**Հաշվեքննության
կատարման
ժամկետը**

ՀՊ 2020թ. նոյեմբերի 20-ի թիվ 184-Ա որոշման համաձայն կատարման ժամկետ է սահմանվել 2020թ. նոյեմբերի 27-ից մինչև 2021թ. հունվարի 31-ը, որը ՀՊ 2020թ. դեկտեմբերի 5-ի ՀՊ 205-Ա որոշմամբ կասեցվել է դեկտեմբերի 8-ից, և վերսկսվել է դեկտեմբերի 25-ից ՀՊ 248-Ա որոշմամբ:

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:
Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:

**Հաշվեքննություն
իրականացնող
կառուցվածքային
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ	5
3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	6
4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	7
5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	8
5.1 Աշխատանքի վարձատրություն	9
5.2 Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	18
5.3 Գրասենյակային նյութեր և հագուստ.....	19
5.4 Տրանսպորտային նյութեր	25
5.5 Ներքին գործուղումներ	28
5.6 Նախարարության կարիքների համար իրականացված գնումներ	29

1. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ՓԾ	Փրկարար ծառայություն
Նախարարություն	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
ՀՓԶ	Հրշեջ փրկարարական ջոկատ
ՄՓՎ	Մարզային փրկարարական վարչություն
ՔՊ	Քաղաքացիական պաշտպանություն
ՀՀՀՀՀՀՀՍ	Հայաստանի Հանրապետության Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտ
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսային ծրագիր
ՀԾ	Հայկական ծրագրեր
ԹՆԱՎ	Թիկունքի և նյութական ապահովման վարչություն

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, ինչպես նաև բնածին և մարդածին աղետների ռիսկերի, հետևանքների նվազեցման և վերացման, իրականացման համակարգման, փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և առաջնային, անհետաձգելի, վթարավերականգնողական աշխատանքների համակարգման, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության փարահանման գործընթացների պետական կարգավորման ու դրա իրականացման աշխատանքների համակարգման, նշված ոլորտների խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվության ստացման, ամփոփման, նշված ոլորտներում կառավարման իրականացման և համակարգման, հումանիտար արձագանքման գործողությունների իրականացման համակարգման, պետական պահուստի պաշարների պահպանման ու սպասարկման, սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման, հիդրոոգեոլոգաքանական երևույթների ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացման ապահովման, մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքների համակարգման, պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության ապահովման, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների արտադրության, առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման լիցենզիաների տրամադրման, արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրի վարման, տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց հավատարմագրման, հաշվառման, ինչպես նաև լիցենզավորման ծառայությունների մատուցման ապահովման, արտակարգ իրավիճակների, աղետների, կոնֆլիկտների տարածքից տուժածների բուժօգնության ցուցաբերման և բուժփարահանման միջոցառումների կառավարման օպերատիվ, կազմակերպչական և ռազմավարական հիմունքների մշակման, ՀՀ պաշտպանության կազմակերպման մասնակցության (խաղաղ ժամանակ ՀՀ պաշտպանության ապահովման ուղղությամբ քաղաքացիական պաշտպանության և փրկարարական ստորաբաժանումների ստեղծումը, զարգացումը, դրանց ծավալման և կիրառման պլանավորումը և ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության և ռազմական գործողությունների պայմաններում այդ ուժերի փոխադրումն անհրաժեշտ մարտական պատրաստականության վիճակի, պատերազմական ժամանակաշրջանի կազմի և կառուցվածքի) ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ 2020թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն Նախարարությանը սահմանված խնդիրների իրականացման համար ընդհանուր թվով բյուջետային 10 ծրագրերի իրականացման համար նախատեսվել է հատկացնել 15,308,673.0 հազ. դրամ: ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Ն որոշման համաձայն նախատեսվել է տարեկան ծախսերը ավելացնել 269,424.0 հազ. դրամով, ինչի արդյունքում 2020թ. տարեկան ճշգրտված պլանը կազմել է 15,578,097.0 հազ. դրամ: ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Ն որոշմամբ 2020թ. ինն ամիսների համամասնությունը սահմանվել է շուրջ 73.9%, կամ ինն ամիսների ճշգրտված պլանը կազմել է 10,975,212.10 հազ. դրամ:

Ըստ ծրագրերի Նախարարության ինն ամիսների ցուցանիշները և ծրագրերի փաստացի կատարողականը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

հազ. դրամ

Ծրագիր	Հոդված	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Կատարման %
Հիդրոօդերևութաբանական ծառայություններ	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	551,519.00	551,519.00	100.0
Տեխնիկական անվտանգության կանոնակարգում	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	85,019.10	85,019.10	100.0
Սեյսմիկ պաշտպանության ոլորտում ծառայությունների տրամադրում	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	560,566.00	560,566.00	100.0
Փրկարարական ծառայություններ	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	6,361,084.50	5,603,284.01	88.1
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	1,437,752.00	1,288,307.67	89.6
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	17,709.30	17,709.30	100.0
	- Էներգետիկ ծառայություններ	99,002.10	96,714.60	97.7
	- Կոմունալ ծառայություններ	8,957.30	8,740.32	97.6
	- Կապի ծառայություններ	17,853.50	16,696.10	93.5
	- Ապահովագրական ծախսեր	12,400.00	8,956.00	72.2
	- Գույքի և սարքավորումների վարձակալություն	2,940.00	2,844.00	96.7
	- Ներքին գործողություններ	27,790.30	13,727.87	49.4
	- Համակարգչային ծառայություններ	3,050.00	2,453.60	80.4
	- Տեղեկատվական ծառայություններ	412.50	382.22	92.7
	- Ներկայացուցչական ծախսեր	1,050.00	220.00	21.0
	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	675.00	-	0.0
	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	30,639.00	21,040.33	68.7
	- Գրասենյակային նյութեր և հագուստ	75,877.10	27,052.63	35.7
	- Գյուղատնտեսական ապրանքներ	1,957.00	1,740.00	88.9
	- Տրանսպորտային նյութեր	152,489.60	137,257.81	90.0
	- Առողջապահական և լաբորատոր նյութեր	5,000.00	-	0.0

	- Հատուկ նպատակային այլ նյութեր	48,649.50	45,812.28	94.2
	- Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից	35,912.20	34,185.53	95.2
	- Այլ հարկեր	-	18,224.40	-
ԱԻՆ փրկարար ծառայության աշխատակիցներին բուժօգնության ծառայությունների տրամադրում	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	12,472.40	12,472.40	100.0
Արտակարգ իրավիճակներում մարդասիրական աջակցության կազմակերպում	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	13,329.30	13,329.30	100.0
Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման կազմակերպում	- Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	7,306.90	5,208.60	71.3
Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	242,513.40	242,513.40	100.0
Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր	- Այլ նպաստներ բյուջեից	29,415.40	29,415.40	100.0
Արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականության մշակում, խորհրդատվական ծառայությունների տրամադրում և մոնիտորինգի իրականացում	- Աշխատողների աշխատավարձեր և հավելվածարժեքներ	516,710.60	511,529.89	99.0
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	105,389.30	98,228.12	93.2
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	63,363.40	63,363.40	100.0
	- Էներգետիկ ծառայություններ	36,525.00	35,808.44	98.0
	- Կոմունալ ծառայություններ	1,777.10	1,633.35	91.9
	- Կապի ծառայություններ	6,461.70	5,471.94	84.7
	- Ապահովագրական ծախսեր	760.00	745.00	98.0
	- Համակարգչային ծառայություններ	3,405.60	1,440.40	42.3
	- Տեղեկատվական ծառայություններ	1,006.20	342.90	34.1
	- Ներկայացուցչական ծախսեր	1,050.00	1,049.00	99.9
	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1,380.00	880.00	63.8
	Մասնագիտական ծառայություններ	180.00	-	0.0
	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	1,695.00	1,670.00	98.5
	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	3,796.20	1,533.42	40.4
	- Գրասենյակային նյութեր և հագուստ	2,639.90	1,617.98	61.3
	- Տրանսպորտային նյութեր	11,170.20	8,012.01	71.7
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	738.00	536.02	72.6
ԸՆԴԱՄԵՆԸ		10,975,212.10	9,872,856.17	90.0

4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվեքննության շրջանակներում Հաշվեքննիչ պալատը 17.12.2020թ. թիվ ՀՊԵ-549 գրությամբ դիմել էր Նախարարությանը՝ հայցելով տրամադրել հաշվեքննության համար անհրաժեշտ տեղեկատվություն, որի վերաբերյալ պատասխան գրությունը հաշվեքննիչ պալատը ստացել է 28.12.2020 թվականի թիվ 01/7574-20 գրությամբ: Տվյալ գրությամբ Նախարարությունը հրաժարվել է հայցվող տեղեկատվությունը տրամադրել ամբողջական ծավալով՝ պատճառաբանելով տարեվերջյան ծանրաբեռնվածությունը, մինչդեռ այդ տեղեկատվության գերակշիռ մասը պատրաստի փաստաթղթեր (հաշվետվություններ) կամ ցուցանիշներ են (օրինակ՝ գույքագրման արդյունքները և դրանց հիման վրա

կազմված եզրափակիչ ակտը և այլն), որոնց տրամադրումը լրացուցիչ որևէ ռեսուրս չէր պահանջում: Ավելին՝ գրությամբ Նախարարությունն առաջարկել է որոշ հաշվետվությունների (ՀԻՄՆԱՐԿԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ՝ ԸՍՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ և ՊԱՍԻՎՆԵՐԻ (Ձև Հ-7, 31.12.2019 թ. դրությամբ), ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև Հ-2), ՀԻՄՆԱՐԿԻ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ, ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև Հ-4), ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Ձև Հ-8)) հասանելիությունն ապահովել տեղում՝ LS Finance ծրագրի միջոցով, որը 01.02.2021թ. դրությամբ դեռևս ապահովված չէր:

ԱԻՆ դիրքորոշում: Նշված տեղեկատվության տրամադրումը էլեկտրոնային եղանակով կապված է եղել ծրագրային ապահովման հետ, ներկայումս բոլոր տեխնիկական խնդիրները լուծված են և տեղեկատվությունը հասանելի է ստուգող խմբի անդամների համար:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ Նախարարությունում 2020թ. պետական բյուջեի ինն ամիսների հաշվեքննության կատարման ժամկետն ավարտվել է 01.02.2021թ-ին, և այդ օրվա դրությամբ ծրագրային հասանելիությունը դեռևս ապահովված չէր:

Եզրահանգում: *Նախարարության կողմից չի պահպանվել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, և հայցվող տեղեկատվությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամանակահատվածում լիարժեք չի տրամադրվել:*

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախարարության կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, 2020թ. ինն ամիսներին Նախարարության փաստացի ծախսը կազմել է 10,797,273.38 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 9,872,856.17 հազ. դրամ, ինչի արդյունքում 2020թ. առաջին կիսամյակի ծախսերի փաստացի կատարողականը կազմել է 89.9%: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է եղել հիմնականում «Փրկարարական ծառայություններ» ծրագրի ծախսերի ցածր կատարողականով, այն է՝ սեպտեմբեր ամսվա աշխատավարձի ծախսերը նախատեսվել են ինն ամիսների ծախսերում, սակայն վճարվել են հոկտեմբեր ամսին:

Նախարարության դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, Նախարարության դեբիտորական պարտքը¹

¹ *ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. թիվ 254-Ն հրամանի համաձայն «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» (Օրինակելի ձև Հ-4) հաշվետվության մեջ ըստ հոդվածների առանձին տողերով ներկայացվում է նաև հիմնարկի կողմից պահուստավորված միջոցների մասին

2020թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 388,353.0 հազ. դրամ, ընդ որում՝ 200,603.63 հազ. դրամը 2019թ. բյուջեից: 30.09.2020թ. դրությամբ Նախարարության ընդհանուր դեբիտորական պարտքերը կազմել են 399,183.48 հազ. դրամ, որից 332,451.50 հազ. դրամը 2019թ. բյուջեից:

Դեբիտորական պարտքերը* հիմնականում ձևավորվել են Փրկարար ծառայության պահուստավորված միջոցների հաշվին, մասնավորապես՝ 2020թ. ինն ամիսների արդյունքներով դեբիտորական պարտք ներառել են՝ «Պահեստավորված գրասենյակային նյութեր և հագուստ (62,154.76 հազ. դրամ)», «Պահեստավորված տրանսպորտային նյութեր (156,573.52 հազ. դրամ)» և «Պահեստավորված հատուկ նպատակային այլ նյութեր (35,636.15 հազ. դրամ)» հոդվածները:

Կրեդիտորական պարտքերը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 56,037.72 հազ. դրամ և ամբողջապես ձևավորվել է 2019թ. բյուջեից: 2020թ. ինն ամիսների արդյունքներով պարտքերն աճել են կազմելով 1,112,302.80 հազ. դրամ, որը ևս հիմնականում պայմանավորված է սեպտեմբեր ամսվա աշխատավարձի հոկտեմբերին կատարվող վճարումով:

Ծրագրերի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների մասին: Նախարարության կողմից իրականացվող բյուջետային 10 ծրագրերի համար սահմանվել են ընդհանուր թվով 165 արդյունքային ցուցանիշներ, ընդ որում՝ «Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում» և ծրագրի գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշներ չեն սահմանվել:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների հաշվետվության, ընդհանուր թվով 146 արդյունքային (կատարողական) ցուցանիշների մասով Նախարարության կողմից ապահովվել է 100% կատարողական, թվով 16 արդյունքային ցուցանիշներ թերակատարվել են, իսկ թվով 3-ը՝ գերակատարվել:

5.1 Աշխատանքի վարձավարություն

Նախարարության աշխատակազմին (ներառյալ ՓԾ աշխատակիցներ) պետական բյուջեից աշխատանքի վարձատրության ծախսերի համար 2020թ. ինն ամիսների ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 8,502,009.1 հազ. դրամ:

Նախարարության աշխատակազմի 2020թ. ինն ամիսների ճշգրտված պլանը կազմել է 685,463.3 հազ. դրամ, իսկ 30.09.2020թ. դրությամբ փաստացի ծախսը կազմել է 725,894.2 հազ. դրամ, կամ գերաճախսը՝ 5,9%: Հաշվետու ժամանակահատվածում

տեղեկատվություն, որը թեև ներառված է դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվության մեջ, սակայն դեբիտորական պարտք չի հանդիսանում:

դրամարկղային ծախսը կազմել է 673,121.4 հազ. դրամ, կամ փաստացի կատարողականը՝ 98.2%:

ՓԾ աշխատակիցներին աշխատանքի վարձատրության ծախսերի համար 2020թ. ինն ամիսների ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 7,816,545.8 հազ. դրամ (3544 հաստիքային միավոր): 30.09.2020թ. դրությամբ փաստացի ծախսը կազմել է 7,715,645.6 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 6,909,301.0 հազ. դրամ, կամ փաստացի կատարողականը կազմել է 88,4%: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է եղել նրանով, որ սեպտեմբեր ամսվա աշխատավարձի ծախսերը նախատեսվել են ինն ամիսների ծախսերում, իսկ վճարումը կատարվել է հոկտեմբեր ամսին:

Աղյուսակ 2.

հազ. դրամ

Ծրագիր	Հոդված	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամ. ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	%
Փրկարարական ծառայություններ	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	8,596,060.20	6,361,084.50	5,603,284.01	6,284,475.38	88.1
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	1,967,555.20	1,437,752.00	1,288,307.67	1,413,460.87	89.6
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	17,709.30	17,709.30	17,709.30	17,709.30	100.0
Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	775,065.90	516,710.60	511,529.89	553,458.08	99.0
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	158,084.00	105,389.30	98,228.12	109,072.67	93.2
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	63,363.40	63,363.40	63,363.40	63,363.40	100.0
Ընդամենը		11,577,838.0	8,502,009.1	7,582,422.4	8,441,539.7	-

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից Նախարարությունում 2020թ. պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների նկատմամբ իրականացված հաշվեքննության հեղուկացման գործընթացի վերաբերյալ.

- **Արձանագրված անհամապատասխանությունը:** Փրկարար ծառայողների արձակուրդի տրամադրման փաստացի գործընթացը չի իրականացվել նախարարի 11.02.2013թ. թիվ 224 հրամանի պահանջներին համապատասխան, ինչպես նաև հակասում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին: Միաժամանակ, չի պահպանվել նաև փրկարար ծառայողների արձակուրդային վճարների հաշվարկման և տրամադրման կարգը:

Հեղհսկողական գործընթացի արդյունքները: 2020թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ թեև փրկարար ծառայողների արձակուրդի տրամադրման գործընթացն իրականացվում է հրամանի հիման վրա, այնուամենայնիվ ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխան արձակուրդային վճարների հաշվարկ և վճարում չի իրականացվել:

- **Արձանագրված անհամապատասխանությունը:** ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712-Ն որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ սահմանվել է փրկարար ծառայության առանձնահատկությունների համար տրվող հավելումների հաշվարկման մեծությունների չափերը, ըստ պաշտոնների դասակարգման խմբերի: ՀՀ կառավարության 26.09.2019թ. թիվ 1278-Ն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում մարմնի ղեկավարը պետք է հաստատի որոշմամբ սահմանված ծառայության առանձնահատուկ պայմանների հաշվառման և փաստաթղթավորման կարգը:

Հեղհսկողական գործընթացի արդյունքները: Նշված կարգը Նախարարության կողմից չի հաստատվել, ինչի հետևանքով ծառայության առանձնահատուկ պայմանների հաշվառման և փաստաթղթավորման գործընթացը լիարժեք չի իրականացվել: Ավելին, 2020թ. ինն ամիսների ընթացքում Նախարարությունը կարգի բացակայության պայմաններում շարունակել է իրականացնել վճարումներ:

- **Աշխատավարձի հաշվարկի հսկողության համակարգի ռիսկեր:** Նախարարության, այդ թվում՝ փրկարար ծառայության, աշխատանքի վարձատրության համար հաշվարկները կատարվում են Excel ծրագրի միջոցով, որտեղ յուրաքանչյուր ամիս ֆինանսատնտեսագիտական վարչության աշխատակիցները մուտքագրում են ստաժի, հաշվարկային գործակցի և այլ փոփոխականների վերաբերյալ տվյալներ: Աշխատավարձերի հաշվարկման ավտոմատացված համակարգ դեռևս ներդրված չէ, ինչը հաշվառման ճշգրտության էական ռիսկեր է պարունակում, հաշվի առնելով նաև համակարգի աշխատակիցների մեծ թիվը:

Հեղհսկողական գործընթացի արդյունքները: Չնայած Նախարարության կողմից տրամադրված պարզաբանումներին որ քայլեր են ձեռնարկվում աշխատավարձի հաշվարկման համար ՀԾ Ձեռնարկություն համակարգի ներդրման համար, 2020թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ վերոնշյալ ծրագրային փաթեթը դեռևս ներդրված չէ, և աշխատանքի վարձատրության հաշվառման ճշգրտության ռիսկերը շարունակում են մնալ բարձր:

2020թ. ինն ամիսների «Աշխատանքի վարձատրություն» հոդվածով իրականացված ծախսերի գնահատման հաշվեքննության արդյունքում արձանագրվել է.

- «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի ե) ենթակետի պահանջը չպահպանելու հետևանքով ԱԻՆ-ը ՓԾ-ում աշխատանքի ընդունելիս աշխատանքային ստաժում ներառել է նաև պարտադիր զինվորական ծառայություն անցած տարիները, ինչի արդյունքում փրկարար ծառայողի պաշտոնային դրույքաչափի հաշվարկման բազմապատիկ գործակիցը արհեստականորեն սահմանվել է ավելի բարձր, քան նախատեսված է ստաժ չունեցող ծառայողի համար:

ԱԻՆ դիրքորոշում: «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» ենթակետի համաձայն՝ Փրկարար ծառայության աշխատողների աշխատանքի վարձատրությունը սահմանվում է նշված օրենքի 8-րդ հավելվածով, որի հիմքում ընկած է աշխատանքային ստաժի մակարդակները, ինչպես նաև զինվորական կոչումները:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական ծառայությունը ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության տեսակ է: ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք համարվում են զինծառայող: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ զինվորական ծառայությունը ներառում է՝ զորակոչի՝ պարտադիր կամ զորահավաքային կամ պայմանագրի կնքման կամ վարժական հավաքի կանչվելու միջոցով զինվորական ծառայության ներգրավումը: Նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ժամկետային զինվորական ծառայությունը, որպես զինվորական ծառայության տեսակ, բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություններից: Պարտադիր զինվորական ծառայությունը ՀՀ քաղաքացիների կողմից ՀՀ պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության իրականացման հիմնական ձևն է: Պարտադիր զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում և այլ զորքերում զորակոչի միջոցով կազմակերպվող ծառայությունը:

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիներն ուսումնառության ընթացքում համարվում են ժամկետային պարտադիր զինծառայողներ, և նրանց վրա տարածվում են ժամկետային պարտադիր զինծառայողների համար օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

Միաժամանակ նույն օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է, որ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում ներառվում է զինծառայողի՝ սույն օրենքով սահմանված զինվորական ծառայության մեջ գտնվելու ամբողջ ժամանակահատվածը:

Ելնելով վերոգրյալից և համադրելով նշված իրավադրույթները՝ գտնում են, որ գործող իրավակարգավորումներով պարտադիր զինվորական ծառայության ստաժը ընդհանուր ստաժում հաշվելու իրավական արգելք առկա չէ և այն ընդհանուր ստաժում հաշվելու գործելակերպն իրավաչափ է:

Հաշվեքննողի արձագանք: Զի ընդունվել, քանի որ դեռևս ԱԻՆ-ում 2020թ. պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ եզրակացությամբ արձանագրվել էր, որ համաձայն «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե) ենթակետի՝ փրկարար ծառայության աշխատողների աշխատանքի վարձատրությունը սահմանվում է Օրենքի 8-րդ հավելվածով, որի հիմքում ընկած է աշխատանքային ստաժի մակարդակները, ինչպես նաև զինվորական կոչումները: Միաժամանակ, «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով

սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը:

Ինչ վերաբերվում է ԱԻՆ դիրքորոշմանը, այն է՝ «գտնում եմ, որ գործող իրավակարգավորումներով պարտադիր զինվորական ծառայության ստացող ընդհանուր ստացում հաշվելու իրավական արգելք առկա չէ և այն ընդհանուր ստացում հաշվելու գործելակերպն իրավաչափ է», ապա աշխատանքի վարձատրությունը իրականացվում է ոչ թե իրավական արգելքների բացակայության, այլ օրենսդրությամբ սահմանված իրավական հիմքերի հիման վրա, իսկ եթե իրավակարգավորումը հստակ չէ, ապա անհրաժեշտ է դիմել լիազոր մարմնին համապատասխան պարզաբանման կամ հստակեցման համար:

**Փրկարար ծառայողների
պաշտոնային դրույքաչափի
ոչ ճիշտ սահմանման
հետևանքով կատարվել է
4,181.4 հազ. դրամի ավելի
վճարում**

Ընտրանքային կարգով ուսումնասիրված թվով 84 փրկարար ծառայողներից, 55-ի պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցում հայտնաբերվել է տարբերություն, ինչի արդյունքում 2020թ. 9 ամիսներին պետական բյուջեից կատարվել է 4,181.4 հազ.դրամի ավելի ծախս: Մասնավորապես՝ Երևանի փրկարարական վարչության «ՆԱԻՐԻՏ գործարան» ՓԲԸ պահպանության հատուկ հրշեջ ջոկատի օղակի

հրամանատար ՓԾ ավագ Ս.Մ.-ն նախարարությունում աշխատում է 2014թ. հոկտեմբերի 3-ից: Ս.Մ.-ի պաշտոնային դրույքաչափը Օրենքով սահմանված 1.85 գործակցի փոխարեն սահմանվել է 2.44, ինչի հետևանքով 2020թ. 8 ամիսների ընթացքում ավելի է հաշվարկվել և վճարվել 312.2 հազ. դրամ: 2020թ. սեպտեմբեր ամսին նախարարության կողմից գործակիցը շտկվել է և համապատասխանեցվել է իր պաշտոնի խմբին:

- Նախարարի 31.01.2020թ. թիվ 149 հրամանի համաձայն աշխատակիցների պարգևատրման համար սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ, սակայն Նախարարությունը չպահպանելով հրամանի պահանջը բազայի պահակներ Ա.Դ.-ի և Ս.Մ.-ի պարգևավճարների հաշվարկման ժամանակ ներառել է նաև վերջիններիս լրավճարները, ինչի հետևանքով յուրաքանչյուրին ավելի է վճարվել 12,0 հազ. դրամ:

ԱԻՆ դիրքորոշում: Նախարարության բազայի պահակներ Ա.Դ.-ի և Ս.Մ.-ի աշխատավարձը կազմում է 89610 դրամ՝ ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, ուստի պարգևատրումը հաշվարկվել է 89610 դրամի նկատմամբ:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ համաձայն հրամանի՝ պարգևատրման չափը անհրաժեշտ էր հաշվարկել պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ:

- Փրկարար ծառայության մասին ՀՀ օրենքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ՓԾ-ում քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ռազմականացված կամ ոչ ռազմականացված պահակային ստորաբաժանումների քաղաքացիական անձնակազմը և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմը փրկարարական ծառայող չեն

համարվում, իսկ նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ռազմականացված կամ ոչ ռազմականացված պահակային ստորաբաժանումների քաղաքացիական անձնակազմի և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց վարձատրության չափերը սահմանել է ՀՀ կառավարությունը՝ 03.07.2014թ. թիվ 737 որոշմամբ (1-ին հավելված):

Նախարարությունը չպահպանելով վերոնշյալ օրենսդրական պահանջը, քաղաքացիական աշխատանք կատարող անձանց վարձատրության դրույքաչափերը սահմանել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործակիցներով, ինչպես նաև վճարել է ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712 որոշման 11.1 հավելվածով սահմանված հավելավճարները:

Աին դիրքորոշում: Քաղաքացիական պաշտպանության վարչությունում քաղաքացիական աշխատանք կատարող անձանց վարձատրության չափերը համապատասխանում են ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 737 որոշմամբ սահմանված գործակիցներին և այդ աշխատակիցներին 03.07.2014թ. թիվ 712 որոշմամբ հաստատված հավելումներ չեն վճարվում:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ ներկայացված դիրքորոշումը չի համապատասխանում փաստացի իրականացված հաշվարկներին և վճարումներին: «Փրկարար ծառայության» մասին ՀՀ օրենքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, փրկարար ծառայությունում քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ռազմականացված կամ ոչ ռազմականացված պահակային ստորաբաժանումների քաղաքացիական անձնակազմը և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմը փրկարարական ծառայող չեն համարվում:

Հաշվեքննության ժամանակ վիճակագրական ընտրանքի հիման վրա իրականացված թեստավորման արդյունքում անհամապատասխանություններ են արձանագրվել նաև աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերում: Այսպես՝

- Երևանի փրկարարական վարչության Շենգավիթի N2 ՀՓՋ-ի հրշեջ փրկարար Հ.Կ-ը ապրիլի 1-9-ի համար ներկայացրել է անաշխատունակության թերթիկ, սակայն ապրիլ ամսվա N4 տեղեկագրում ապրիլի 1-2-ի համար նշվել է, որ գտնվել է շուրջօրյա հերթապահության մեջ,
- Աբովյանի ՀՓՋ-ի խմբի պետ Ա.Պ.-ը 2020թ. մարտի 26-ից ապրիլի 2-ի համար ներկայացրել է անաշխատունակության թերթիկ, սակայն մարտ ամսվա N6 տեղեկագրում նշված օրերի համար նշվել է, որ գտնվել է շուրջօրյա հերթապահության մեջ,
- Արարարատի ՄՓՎ-ի վարորդ սերժանտ Ա.Ֆ. 2020թ. մայիսի 20-25-ի համար ներկայացրել է անաշխատունակության թերթիկ, սակայն աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրում այդ օրերի համար նշվել է, որ գտնվել է ծառայության մեջ,

- Շիրակի ՄՓՎ-ի Գյումրու 48 ՀՓՁ-ի ընդհանուր պրոֆիլի հրշեջ փրկարար Տ.Մ.-ը օգոստոսի 13-21-ի և սեպտեմբերի 25-29-ի համար ներկայացրել է անաշխատունակության թերթիկ, սակայն նշված օրերին տեղեկագրում նշվել է, որ գտնվել է 24-ժամյա հերթապահության մեջ: Վերջինս, սեպտեմբեր ամսին աշխատել է 5 օր 24-ժամյա ռեժիմով, սակայն վճարվել է 8 օր 24-ժամյա ռեժիմի համար:
 - Կոտայքի ՄՓՎ-ի պետ Ա.Ա.-ը 2020թ հուլիսի 15-28-ի համար ներկայացրել է անաշխատունակության թերթիկ, իսկ 29-31-ը բացակայել է և որևէ փաստաթուղթ չի ներկայացրել: Տեղեկագրում աշխատած օրերի թիվը նշվել է 10 օր, սակայն Նախարարության կողմից անտեսվել է բացակա օրերի հանգամանքը, և վերջինիս ավելի է վճարել 47.880 դրամ:
- «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն ՀՀ օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար, նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ պետական ծառայողը, աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից, կարող է պարգևատրվել իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ անմիջական ղեկավարի առաջարկությամբ կամ ՀՀ օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ: Նախարարությունը չի պահպանել վերոնշյալ օրենսդրական պահանջը, իսկ մի շարք դեպքերում պարգևատրումները կազմել են պաշտոնային դրույքաչափի 150-380 տոկոսը: Մասնավորապես՝
- Լոռու մարզի հրշեջ փրկարար Ա.Գ.Զ.-ի պաշտոնային դրույքաչափը կազմում է 170 788 դրամ, 03.02.2020թ. ԱԽՆ նախարարի ՆՈ-157 հրամանով պարգևատրվել է 649,350 դրամով: Վերը նշված օրենքով նախատեսված առավելագույն հնարավոր գումարը գերազանցվել է 478,562 դրամով (649350-170788):
 - Փրկարար ծառայության վարորդ-մեխանիկ, ավագ սերժանտ Գ.Գ. Մ.-ի պաշտոնային դրույքաչափը կազմել է 185 381 դրամ, 14.04.2020թ. ՆՈ 473 հրամանով պարգևատրվել է 414,479 դրամով: Առավելագույն հնարավոր գումարը գերազանցվել է 229,098 դրամով (414,479-185,381):
- «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն² ՓԾ հաստիքներից թվով 61 հաստիքային միավոր ՀՀ

² Օրենքի դրույթն ուժի մեջ է եղել մինչև 2020 թվականի փետրվարի 22-ը

կառավարության 01.03.2012թ. թիվ 277-Ն որոշմամբ գործուղվել է Նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպություններ, այդ թվում՝ 18 միավորը՝ ՃԿ պետական ակադեմիա, 27-ը՝ Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն ՊՈԱԿ, 5-ը՝ ՀՀ այլ պետական մարմիններում, օտարերկրյա այլ պետություններում, միջազգային կազմակերպություններում, 1-ը՝ ԱԻՆ-ի ներկայացուցիչ ՌԴ ԱԻՆ-ում և 10-ը՝ օդանավակայան: 21.01.2020թ. «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-19-Ն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքի 11-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, որտեղից հանվել է 1-ին մասի 1.1 կետը, այն է՝ հաստիքների գործուղման հիմքը³:

Նախարարությունը չպահպանելով վերոնշյալ օրենսդրական փոփոխության պահանջը՝ գործուղված հաստիքները հետ կանչելու և ֆինանսավորումը դադարացնելու փոխարեն, շարունակել է վճարել այդ հաստիքների համար

**Չպահպանելով
օրենսդրության պահանջները
կատարվել է 86,582.0
հազ.դրամի ավելի վճարում:**

նախատեսված աշխատավարձերը, պարգևավճարները, ինչպես նաև հավելավճարները: Օրենսդրական պահանջները չպահպանելու հետևանքով խեղաթյուրումների ընդհանուր գումարը 2020թ. 9 ամիսների համար կազմել է 86,582.0 հազ.դրամ:

Հաշվի առնելով վերոնշյալ երևույթների համատարած բնույթը և դրանց հնարավոր էական ազդեցությունը հաշվետվությունների արժանահավատության վրա, Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի տարեկան հաշվեքննության շրջանակում դեռևս կանդիդատնա աշխատանքի վարձատրություն հոդվածում արձանագրված անհամապատասխանություններին:

ԱԻՆ դիրքորոշում 1: Կուրայքի ՄՓՎ պետր Ա.Ա.-ի մասով 24.07.2020թ-ին ներկայացվել է աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր՝ 2020թ հուլիսի 15-31-ին անաշխատունակության մեջ գտնվելու վերաբերյալ, սակայն 03.08.2020թ-ին Mulberry համակարգով ներկայացվել է ճշրված աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր հուլիսի 29-ից-31-ը աշխատանքի ներկայանալու վերաբերյալ, որը ներկայացվել է հաշվեքննություն իրականացնող խմբին:

Արարատի ՄՓՎ վարորդ փ/ծ սերժանտ Ա.Ֆ.-ի մասով 20.05.2020թ ներկայացվել է աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր 2020թ-ի մայիս ամսին ներկա լինելու վերաբերյալ, սակայն 20.06.2020թ-ին Mulberry համակարգով ներկայացվել է ճշրված աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր և անաշխատունակության թերթիկ 25.05-27.05.2020թ վաղառողջ լինելու վերաբերյալ, որոնք ներկայացվել են հաշվեքննություն իրականացնող խմբին:

Աբովյանի ՀՓՋ խմբի պետր Ա.Պ.-ի մասով 25.03.2020թ-ին ներկայացվել է աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր ներկա լինելու վերաբերյալ, սակայն 23.04.2020թ-ին Mulberry համակարգով ներկայացվել է ճշրված աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր և անաշխատունակության թերթիկ

³ Օրենքի դրույթն ուժի մեջ է մտել 2020 թվականի փետրվարի 22-ից

26.03-02.04.2020թ. ժամանակահատվածի համար, որոնք ներկայացվել են հաշվեքննություն իրականացնող խմբին:

Շիրակի ՄՓՎ-ի Գյումրու 48 ՀՓՋ ընդհանուր պրոֆիլի հրշեջ փրկարար Տ.Մ.ի մասով 20.08.2020թ ներկայացվել է աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր ներկա լինելու վերաբերյալ, սակայն 22.09.2020թ Mulberry համակարգով ներկայացվել է ճշգրիտ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր և անաշխատունակության թերթիկ 13.08.2020-21.08.2020թ. և 25.09-29.09.2020թ ժամանակահատվածների համար, որոնք ներկայացվել են հաշվեքննություն իրականացնող խմբին:

ԱԻՆ դիրքորոշում 2: ԵՓՎ Շենգավիթ N2 ՀՓՋ հրշեջ փրկարար Հ.Կ.-ը 01.04-09.04.2020թ համար ներկայացրել է անաշխատունակության թերթիկ և աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրում 01.04.2020թ-ին եղել է նշված շուրջօրյա հերթապահության մեջ, սակայն 01.04.2020թ Հ.Կ. լինելով հերթապահության մեջ ինքնազգացողության վատթարացման պատճառով գնացել է բժշկի և բացել անաշխատունակության թերթիկ սկսած 01.04.2020թ-ից: Հաշվի առնելով, որ Շենգավիթ N2 ՀՓՋ-ում վարվող հերթապահության մատյանում այդ օրը նշված է եղել հերթապահություն, աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիրը ներկայացվել է ծառայության մատյանին համապատասխան:

ԱԻՆ դիրքորոշում 3: Լոռու մարզի հրշեջ փրկարար Ա.Գ.Զ.-ը և Փրկարար ծառայության վարորդ մեխանիկ ավագ սերժանտ Գ.Գ.Մ.-ը պարգևատրվել են 2019թ.-ի ընթացքում կատարված աշխատանքների համար:

Հաշվեքննողի արձագանք 1: Ընդունվել է ի գիտություն, սակայն հաշվեքննության ընթացքում Արարատի ՄՓՎ վարորդ փ/ծ սերժանտ Ա.Ֆ.-ի, Գյումրու 48 ՀՓՋ ընդհանուր պրոֆիլի հրշեջ փրկարար Տ.Մ.ի և Աբովյանի ՀՓՋ խմբի պետ Ա.Պ.-ի ճշգրիտ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը հաշվեքննությունն իրականացնող խմբին չեն ներկայացվել: Միաժամանակ, անհրաժեշտ է նաև քայլեր ձեռնարկել փաստաթղթաշրջանառության գործընթացը կանոնակարգելու համար:

Հաշվեքննողի արձագանք 2: Չի ընդունվել, քանի որ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիրը լրացվում է ոչ թե հերթապահության գրաֆիկի համաձայն, այլ փաստացի աշխատաժամանակի հիման վրա:

Հաշվեքննողի արձագանք 3: Չի ընդունվել, քանի որ պարգևատրումն իրականացվել է չպահպանելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները:

Եզրահանգում: Նախարարության կողմից չի պահպանվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի ե) ենթակետի, 22-րդ հոդվածի 9-րդ մասի, «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-19-Ն օրենքի 4-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 03.07.2014թ. N712 որոշման պահանջները, մի շարք դեպքերում սխալ է հաշվարկվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածով սահմանված դրույքաչափերը, ինչպես նաև դեռևս չի մշակվել ծառայության առանձնահատուկ պայմանների հաշվառման և փաստաթղթավորման կարգը, որի բացակայության և դրա հետևանքով առաջացած հաշվեքննության շրջանակների սահմանափակման պատճառով, հավելումների համար վճարված 1,288,307.67 հազ. դրամ գումարը հնարավոր չի եղել ենթարկել հաշվեքննության և որոշել խեղաթյուրման չափը:

5.2 Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին

«Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով պետական բյուջեից 2020թ. նախատեսվել է հատկացնել 2,728,432.1 հազ. դրամ, որից 9 ամիսներին՝ 1,553,817,7.0 հազ. դրամ: 2020թ. ինն ամիսների փաստացի և դրամարկղային ծախսը կազմել է 1,553,817,7.0 հազ. դրամ: Հոդվածի շրջանակներում Նախարարության և վերջինիս ենթակայության տակ գործող ոչ առևտրային կազմակերպությունների միջև կնքվել է դրամաշնորհի 10 պայմանագրեր:

Աղյուսակ 3.
դրամ

	Ստացողի անվանումը	Պայմանագրի գումար	Ինը ամիսներում վճարված գումար	Մնացորդ	Նպատակ
1	Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն ՊՈԱԿ	82,201,800.0	57,717,000.0	24,484,800.0	Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
2	Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն ՊՈԱԿ	736,819,300.0	502,849,000.0	233,970,300.0	Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
3	Հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն ՊՈԱԿ	1,313,140,500.0	551,519,000.0	761,621,500.0	Հիդրոոդերևութաբանական ծառայություններ
4	Պահուստ ՊՈԱԿ	189,910,700.0	140,007,120.0	49,903,580.0	Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանում
5	Լազուր ՊՈԱԿ	137,810,100.0	102,506,280.0	35,303,820.0	Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանում
6	Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ	46,297,200.0	31,019,100.0	15,278,100.0	Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ
7	Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ	54,000,000.0	54,000,000.0	0.0	Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ
8	Աղետների բժշկության կենտրոն ՊՈԱԿ	18,707,700.0	12,472,400.0	6,235,300.0	Արտակարգ իրավիճակներում բուժօգնության ծառայություններ
9	Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա ՊՈԱԿ	126,283,600.0	88,398,500.0	37,885,100.0	Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայություններ
10	Ռուս- հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն ՄՈԱԿ	23,261,200.0	13,329,300.0	9,931,900.0	Պետական աջակցություն ռուս-հայկական հումանիտար արձագանքման կենտրոնին
	Ընդամենը	2,728,432,100.0	1,553,817,700.0	1,174,614,400.0	

Հաշվի առնելով այն, որ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով ծախսը կատարվել է Նախարարության ենթակայության տակ գործող կազմակերպությունների կողմից, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության կողմից 2020թ. հունիսի 18-ին ընդունված թիվ 973-

Ա, 974-Ա, 975-Ա, 976-Ա որոշումներով լուծարվել են «ԼԱԶՈՒՐ», «ՊԱՀՈՒՍՏ», «ԱՂԵՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» և «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-ները, սույն հոդվածով կատարված ծախսերի գնահատում ինն ամիսների համար չի իրականացվել:

5.3 Գրասենյակային նյութեր և հագուստ

«Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով պետական բյուջեից 2020թ. նախատեսվել է հատկացնել 114,932.20 հազ. դրամ, որից 9 ամիսներին՝ 75,877.1 հազ. դրամ: 2020թ. ինն ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 27,052.2 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 38,118.2 հազ. դրամ:

ՓԾ «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» (Ձև 4) հաշվետվության համաձայն 01.01.2020թ.-ի դրությամբ «Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով դեբիտորական պարտքը (պահուստավորված միջոցները) կազմել է 140,001.2 հազ. դրամ: 2020թ. 9 ամիսների ընթացքում իրականացվել է ընդհանուր թվով 40 անվանում հանդերձանքի ելքագրում, որի փաստացի ծախսը կազմել է 32,914.4 հազ. դրամ:

Հանդերձանքի տրամադրման գործընթացի հաշվառման ռիսկեր:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ փրկարար ծառայողներին հանդերձանքի տրամադրման հաշվառումը իրականացվում է թղթային եղանակով, մատյանների և անհատական թերթիկներում (քարտերում) նշումներ կատարելու միջոցով, ինչը ոչ միայն աշխատատար է, այլև սխալվելու և անհամապատասխանությունների առաջացման էական ռիսկեր է պարունակում:

Միաժամանակ, թե անհատական քարտերը և թե գրանցման մատյանները պահպանվում են Փրկարար ծառայության Թիկունքի և նյութական ապահովման վարչությունում (ԹՆԱՎ), ինչը ևս հանդերձանքի տրամադրման հսկողության տեսանկյունից կարող է էական խեղաթյուրումների ռիսկեր առաջացնել: Ավելին, հաշվառման գործընթացը քարտային եղանակով կազմակերպելու արդյունքում լրացուցիչ դժվարություններ են առաջանում պլանավորման աշխատանքների ճշգրիտ կազմակերպման համար: Օրինակ՝ բյուջետային հայտի ճշգրիտ հաշվարկման համար անհրաժեշտ է տվյալները հավաքագրել շուրջ 3400 անհատական թերթիկներից: Նույն խնդիրն առկա է նաև հանդերձանքի ձեռքբերման ժամանակ՝ չափի և տեսակի հստակ պլանավորման տեսանկյունից:

Պլանավորման գործընթացի խնդիրներ:

2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի (ՄԺԾԾ) հայտի համաձայն հանդերձանքի համար հաշվարկվել է ընդամենը 411,684.0 հազ. դրամ: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 02.02.2006թ. թիվ 249-Ն «Փրկարարական

ծառայության համազգեստի ձևի տալու կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» որոշմամբ սահմանված նորմաների հիման վրա: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՄԺԾԾ և բյուջետային հայտի կազմման ժամանակ հաշվի չի առնվել տարեսկզբի ապրանքային մնացորդները: ՄԺԾԾ հիմքում ընկած ցուցանիշների համար հաշվարկները իրականացվել են Փրկարար ծառայողների թվի հիման վրա՝ ընդհանրական հաշվարկի սկզբունքով:

Աղյուսակ 3.
հազ.դրամ

	N	2017	2018	2019	2020
2020-2022 թթ. ՄԺԾԾ, 02.02.2006թ. N249-Ն ՀՀ կառավ. Որոշմամբ սահմանված նորմաների հիման վրա, հազ. դրամ	(1)	375,976.0	761,316.0	826,588.1	411,684.0
Բյուջետային հայտով նախատեսված հազ. դրամ	(2)	82,716.3	99,716.0	94,216.0	94,216.0
Բյուջեից փաստացի հատկացված միջոցներ հազ. դրամ	(3)	82,716.3	94,716.0	94,216.0	94,216.0
Բյուջետային հայտով նախատեսված ֆինանսավորման տեսակարար կշիռը ՄԺԾԾ-ի նկատմամբ	(4)=(2)/(1) *100 %	22.0	13.1	11.4	22.9
Բյուջեից փաստացի հատկացված միջոցների տեսակարար կշիռը ՄԺԾԾ-ի նկատմամբ	(5)=(3)/(1) *100 %	22.0	12.4	11.4	22.0

Միաժամանակ, Փրկարար ծառայության ԹՆԱՎ վարչության կողմից չի ներկայացվել նաև հիմնավորում բյուջետային հայտով ներկայացված հանդերձանքի գումարի համար, որը մեկ անգամ ևս փաստում է հաշվառման գործընթացը թղթային ձևաչափով/մատյաններով և անհատական քարտերով/ կազմակերպելու խնդիրների մասին: Արդյունքում, ինչպես երևում է Աղյուսակ 3-ից պետական բյուջեից հատկացված ֆինանսավորման չափը շուրջ 5 անգամ պակաս է ՄԺԾԾ-ով նախատեսված ֆինանսավորումից, ինչը հիմնավոր հաշվարկների բացակայության հետևանքով շարունակվել է վերջին 5 տարիների ընթացքում:

2020 թ. 9 ամիսների ընթացքում ձեռք բերված 101,600.8 հազ. դրամի նյութական արժեքների կամ ընդհանուր մնացորդի 24.6 նկատմամբ որևէ ելքագրում չի կատարվել

Պլանավորման և ծախսագրման տեսանկյունից խնդրահարույց է նաև Փրկարար ծառայության նյութական արժեքների շրջանառության կազմակերպումը: Համաձայն Նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից վարվող հաշվառման նյութական արժեքների շրջանառության մատյանի 01.01.2020թ.-ի դրությամբ ձեռք բերված 96,879.4 հազ. դրամ գումարով 1928 անվանում ապրանքների համար (ընդհանուր 4417 անվանում՝ 393,634.3 հազ. դրամ արժեքով) նյութական արժեքների շարժ տեղի չի ունեցել: Ընդ որում, 9 ամիսների ընթացքում զրոյական շարժով

անվանումներին ավելացել են ևս 10 անուն նյութական արժեք ունեցող ապրանքներ՝ 4,721.4 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Այսպիսով 30.09.2020թ. դրությամբ Փրկարար ծառայության հաշվեկշռում առկա նյութական արժեքների մնացորդի 24.6 %-ի (101,600.8 հազ. դրամ) նկատմամբ որևէ ելքագրում չի կատարվել:

Ընտրանքային կարգով ուսումնասիրված հանդերձանքի բշխման գործընթացի վերաբերյալ:

Հաշվեքննության ստանդարտների համաձայն կատարված ընտրանքի համար իրականացված ընթացակարգերի արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- Ելքի կարգագրերը կազմվել են հիմք ընդունելով ներկայացված գրությունը, սակայն հաշվեքննությամբ արձանագրվել է, որ առկա են դեպքեր, երբ գրության և ելքի կարգագրի ամսաթվերի միջև առկա է անհամապատասխանություն: Օրինակ՝ թիվ «20-17» ելքի կարգագիրը կազմվել է 15.01.2020թ-ին, մինչդեռ դրա համար հիմք հանդիսացած Ն/1191 գրությունը ներկայացվել է 14.01.2020թ.-ին՝ կարգագիրը կազմելուց մեկ օր ուշ:
- Ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից տրամադրած հաշվետվությունների և Փրկարար ծառայության ԹՆԱՎ վարչության կողմից տրամադրված հաշվետվությունների համադրման արդյունքում արձանագրվել է, որ հանդերձանքի միևնույն տեսակի անվանումը և չափի միավորը երկու ստորաբաժանումների կողմից օգտագործվող ծրագրերում տարբեր է: Օրինակ՝ ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական ծրագրում (ՀԾ) որպես անվանում նշված է «Համազգեստ Հատուկ հանդերձանք և պարագաներ(Քողարկվող համազգեստի լրակազմ)», իսկ չափի միավորը՝ հատ, իս ԹՆԱՎ-ի ծրագրում նշված է՝ «Ամենօրյա համազգեստ՝ բաճկոն, տաբատ, կեպի/պիլոտկա» անվանումը, չափի միավորը՝ լրակազմ: Անհամապատասխանություն է արձանագրվել նաև տվյալ համազգեստի ձեռք բերման հաշիվ ապրանքագրում նշված անվանման հետ, որտեղ որպես անվանում նշվել է՝ «Հատուկ հանդերձանք-պարագաներ (ամենօրյա համազգեստ)», իսկ չափի միավորը՝ հատ:
- ՀՀ կառավարության 10.08.2017թ. և 30.04.2020թ.՝ «Փրկարարական ծառայության համազգեստի ձևը, տալու կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» N 979-Ն և N 668-Լ որոշումների հավելված 2-ով որպես չափի միավոր է նշվել հատը կամ լրակազմը: Հաշվեքննության շրջանակներում իրականացված ընտրանքում ներառված 32 գործառնություններից 22-ում արձանագրվել է անվանումների և/կամ քանակների անհամապատաս-

խանութիւններ, ինչը հաշվառման գործընթացում կարող է խնդիրներ առաջացնել և պարունակում է խեղաթյուրումների էական ռիսկեր (օրինակ՝ լրակազմի բաղադրիչներից որևէ մեկի վնասվելու դեպքում մասնակի փոխարինման ընթացքում կառաջանա հաշվառման խնդիր):

- Նախարարության կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 10.08.2017թ. և 30.04.2020թ.՝ «Փրկարարական ծառայության համազգեստի ձևը, տալու կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» N 979-Ն և N 668-Լ որոշումների պահանջները: Մասնավորապես Ա.Դ.-ն «Բաճկոն ծմեռային» ստացել է 18.09.2013թ.-ին, որից հետո 7 տարի շարունակ՝ մինչև 03.11. 2019թ. չի ստացել, այն դեպքում, երբ կառավարության որոշման համաձայն պետք է ստանար 3 տարի հետո: Միննույն ժամանակ, 2014-2015թթ. ընթացքում չի ստացել նաև ուսադիր, այնինչ կառավարության որոշման համաձայն ուսադիրը տրամադրվում է տարին մեկ անգամ:

Մեկ այլ դեպքում՝ 13.12.2019թ.-ի N1381-Ա հրամանով Ս.Ա.-ին շնորհվել է ՓԾ լեյտենանտի կոչում, որին հասանելիք տոնական համազգեստը տրամադրվել է երեք ամիս ուշ՝ 18.03.2020թ.-ին, ամենօրյա համազգեստ (կանաչը)՝ 08.05.2019թ.-ն, հաջորդ հերթականը՝ 29.10.2020թ.-ին կամ կառավարության որոշմամբ սահմանված ժամկետից՝ համապատասխանաբար 3 և 6 ամիս ուշ:

- ՀՀ կառավարության 10.08.2017թ. «Փրկարարական ծառայության համազգեստի ձևը, տալու կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» N 979-Ն որոշմամբ չի սահմանվել դրույթ փրկարարական ծառայողի բացատրության կամ նրա անմիջական հրամանատարների (պետերի) զեկուցագրերի հիման վրա արտակարգ իրավիճակների կամ դեպքի վայրում վնասված, ժամկետից շուտ շարքից դուրս եկած, հետագա օգտագործման համար ոչ պիտանի համազգեստի դուրս գրման և փոխարինման վերաբերյալ:

ՀՀ կառավարության 30.04.2020թ.-ի «Փրկարարական ծառայության համազգեստի ձևը, տրամադրման կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» N 668-Լ որոշման Հավելված 2-ի 23-րդ կետով սահմանվել է, որ արտակարգ իրավիճակների կամ դեպքի վայրում վնասված, ժամկետից շուտ շարքից դուրս եկած, հետագա օգտագործման համար ոչ պիտանի համազգեստի դուրս գրումը և փոխարինումը կատարվում է փրկարարական ծառայողի բացատրության կամ նրա անմիջական հրամանատարների (պետերի) զեկուցագրերի հիման վրա:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2020թ. 9 ամիսների ընթացքում թվով 9 դեպքով՝ սահմանված ժամկետներից շուտ հանդերձանք է հատկացվել թվով 110 ՓԾ աշխատակիցների 984,128 դրամ գումարով, այդ թվում՝ մինչև նոր

որոշման ուժի մեջ մտնելը, թվով 6 դեպքով հանդերձանք է հատկացվել 6 աշխատակիցների, ինչի հետևանքով առաջացած խեղաթյուրման ընդհանուր գումարը կազմում է 60,081 դրամ:

- Որպես օգնություն ստացված հանդերձանքի 2020թ. 9 ամիսների շարժի վերաբերյալ հաշվետվության համաձայն, 01.01.2020-09.30.2020թթ. ՓԾ-ին

**Թվով 11 անվանում
հանդերձանք պահեստ
մուտքագրվել և հաշվառվել է
0, 1 կամ 2 դրամ պայմանական
արժեքով:**

որպես նվիրատվություն փոխանցվել է 14 անվանում հանդերձանք, որից 3-ի ընդհանուր արժեքը կազմել է 13,247.8 հազ. դրամ, մնացած 11-ը պահեստ մուտքագրվել և

հաշվառվել են 0, 1, կամ 2 դրամ պայմանական արժեքով: Արդյունքում Նախարարության կողմից չի պահպանվել <<<<<< ստանդարտի 26.54 կետով սահմանված պահանջները:

- Որպես նվիրատվություն ստացած հանդերձանքի մուտքագրման փաստաթղթերում առկա նյութական արժեքների անվանումները չի համապատասխանում Ֆինանսատնտեսագիտական վարչության (<Ծ) և ՓԾ ԹՆԱՎ կողմից տրամադրված հաշվետվության անվանումներին: Օրինակ՝ նվիրատվության վկայագրի հավելվածում ապրանքի անվանում նշվել է՝ «Պաշտպանիչ արտահագուստ, բազմակի օգտագործման, երեք չափերի», իսկ <Ծ, ՓԾ և մուտքի կարգագրում հաշվառվել է՝ «Արտահագուստ պաշտպանիչ ԿԽՄԿ» և այլն:

ԱԻՆ դիրքորոշում 1: Փրկարար ծառայողների հանդերձանքի բաշխման գործընթացն իրականացվում է ԱԻՆ միասնական ավտոմատացված կառավարման համակարգի միջոցով ելքագրվող կարգագրերով՝ էլեկտրոնային եղանակով, իսկ անհատական հաշվառումն իրականացվում է մատյաններում և անհատական քարտերում համապատասխան գրառումների իրականացմամբ: Անհատական հաշվառման արդյունավետության բարձրացման և աշխատատեղի կրճատման նպատակով 2021թ-ի առաջին կիսամյակում նախատեսվում է տվյալների ողջ բազան թվայնացնել և ներբեռնել միասնական համակարգ, որից հետո հաշվառումը կիրականացվի միասնական ավտոմատացված կառավարման համակարգի միջոցով: Մինչ օրս իրականացվող անհատական հաշվառման գործընթացի ժամանակավարության պատճառով սխալ պլանավորման կամ էական խեղաթյուրումների դիսկ չի առաջացել:

ԱԻՆ դիրքորոշում 2: Միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջեային հայտերի կազմման ժամանակ միշտ հաշվի են առնվում ապրանքանյութական արժեքների տարեսկզբի մնացորդները, այլ խնդիր է, երբ պարզվի, որ տարվա ընթացքում հայտնվում է այնպիսի իրավիճակ, որ չի կարողանում կիրառել օրենքով սահմանված միջոցներ՝ ոչ բարեխիղճ մատակարարներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու ուղղությամբ, ինչը տեղի ունեցավ 2019-2020թթ-ի ընթացքում հանդերձանքի հիմնական խմբաքանակի մատակարարի դեպքում: Երկրում COVID-19 համավարակի պատճառով ստեղծված արտակարգ դրության պայմաններում գործող իրավական ակտերը թույլ չէին տալիս պարզապես օրենքով սահմանված պարզիչ միջոցներ ձեռնարկել գնման

պայմանագրերով նախատեսված մատակարարման ժամկետները բազմիցս խախտած ընկերությունների նկատմամբ: Իրավիճակն ավելի բարդացավ երկրում հայտարարված ռազմական դրության ժամանակ, երբ բոլոր կարգի գործարանները պարտավորվել էին առաջնահերթ իրականացնել բացառապես զինված ուժերի կարիքների համար նախատեսված հանդերձանքի պատվերները: Արդյունքում երկու տարի շարունակ փրկարար ծառայության հանդերձանքի մատակարարումն իրականացվեց միայն տարեվերջին, ինչը խախտեց պլանավորման և բաշխման ողջ ընթացքը: Նշված պատճառներով պայմանավորված ժամկետանց մատակարարումները պարզվեցին՝ ԱԽՆ փրկարար ծառայությունը, բնականաբար չէր կարող կանխատեսել:

Վերջին տարիների ընթացքում ինչպես ՄԺԾԾ-ում, այնպես էլ տարեկան բյուջեի նախագծերում հստակ նշված են եղել ԱԽՆ փրկարար ծառայության կարիքների համար անհրաժեշտ բոլոր ապրանքանյութական արժեքների՝ այդ թվում հանդերձանքի ցանկը՝ ըստ տեսակների, քանակների և արժեքների: Տարեկան բյուջեի հաստատվելուց հետո Փրկարար ծառայությունը ստիպված է եղել վերանայել տարվա գնումների պլանը՝ թողնելով միայն ամենօրյա կրման հանդերձանքի տեսակները, կրճատելով մնացած տեսակները՝ ամբողջությամբ կամ մասնակի (մարտական համազգեստ ամառային և ձմեռային, սակրավորի համազգեստ, ջրափրկարարի համազգեստ ամառային և ձմեռային, տոնական համազգեստ ամառային և ձմեռային լրակազմերով, թիկնոց-անձրևանոցներ, կոշիկներ և այլն) բյուջեի թերհավակցման պատճառով:

ԱԽՆ դիրքորոշում 3: Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության արձանագրությամբ ֆիքսված միայն մեկ դեպքը՝ կապված հանդերձանքի ելքի կարգագրի և դրա հիմքը հանդիսացող փաստաթղթի ամսաթվերի մեկ օրվա տարբերության հետ, առաջացել է փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգի (mulberry-2) ժամանակագրության հետևանքով, որտեղ հստակ երևում է հանդերձանք տրամադրելու վերաբերյալ գրության ամսաթիվը, որը համընկնում է ելքի կարգագրի ամսաթվի հետ: Մեկ օրվա տարբերությունն առաջացել է արդեն տպագրված փաստաթղթի վրա գրիչով դրված ամսաթվի հետևանքով, ինչը որևէ խնդիր չի առաջացրել օրենքով սահմանված կարգով հանդերձանքի բաշխման և հաշվառման գործընթացում:

ՓԾ ՃԿԱԿ 911 ահազանգման կենտրոնի հրահանգիչ (911 ավագ դիսպետչեր), փ/ծ կապիտան Ա.Ղ.-ի <<Ձմեռային բաճկոնի>> կրման ժամկետը լրացել է 18.09.2017թ-ին (կրման ժամկետն ըստ գործող կառավարության՝ 4 տարի): 2017թ-ին փրկարար ծառայությունում իրականացվել է միայն քողարկող համազգեստի բաշխում, որի մատակարարումն իրականացվել է դեկտեմբեր ամսին: Ամենօրյա փիրուզագույն համազգեստի՝ այդ թվում ձմեռային բաճկոնի հաջորդ մատակարարումն իրականացվել է 2019թ-ի փետրվարին: Ա.Ղ. 2019թ-ի օգոստոս ամսից գտնվել է ֆիզ. արձակուրդում և հանդերձավորվել է արձակուրդից վերադառնալուց հետո:

ՓԾ ՃԿԱԿ օպերատիվ հերթափոխի բաժնի հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Ս.Ա.-ին համազգեստի տրամադրման ուշացումը պայմանավորված է եղել հերթական խմբաքանակի մեջ տվյալ չափսի բացակայությամբ: Համազգեստի բաշխման ընթացքում լինում են դեպքեր, երբ ծառայողները հրաժարվում են տրամադրվելիք ուսադիրներից իրենց ցանկացած մետադական աստղերով կամ պլաստիկ միջադիրներով և սահմանված կարգին համապատասխանող ուսադիրներ տեղադրելու նպատակով:

Դեպքի վայրերում վնասված համազգեստների վերաբերյալ հիմնավոր զեկուցագրերի և փաստերի հիման վրա փրկարար ծառայողներին միշտ հաղկացվել է համապատասխան համազգեստ, քանի որ ծառայության կազմակերպման տեսանկյունից ժամկետից շուտ և արդարացված հանգամանքներում վնասված համազգեստով փրկարարը չի կարող ամիսներ շարունակ ծառայության ներկայանալ պատահողով, այրված կամ գունաթափված համազգեստով:

ԱԽՆ դիրքորոշում 4: ԱԽՆ Ֆինանսատնտեսագիտական վարչության և ՓԾ թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության կողմից տրամադրված հաշվետվություններում առկա հանդերձանքի անվանումների տարբերությունը պայմանավորված է ֆինանսների նախարարության կողմից հրապարակված միասնական ցանկի ծածկագրերի (CPV կոդերի) միատեսակ անվանումների հետ: Օրինակ՝

փրկարար ծառայողի ամենօրյա, քողարկող, աշխատանքային համազգեստները, ինչպես նաև դրանց ձմեռային տեսակները ցանկում նշվում են մեկ անվանմամբ՝ Հատուկ հանդերձանք և պարագաներ: Փրկարար ծառայությունը չի կարող տարբեր հանդերձանքների հաշվառումն իրականացնել միևնույն անվանմամբ, ինչպես նշվում է CPV կոդերի անվանացանկում:

Հաշվեքննողի արձագանք 1: Չի ընդունվել, քանի որ հաշվեքննության շրջանակներում արձանագրված համակարգային ռիսկերը և խեղաթյուրումների հավանականությունը հիմնավորվել է նաև ընտրանքային կարգով ուսումնասիրված հանդերձանքի բաշխման գործընթացի արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների քանակով և բնույթով: Ինչ վերաբերվում է միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրմանը, ապա այդ ուղղությամբ կիրականացվի հետսկողություն:

Հաշվեքննողի արձագանք 2: Չի ընդունվել, քանի որ հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՄԺԾԾ և բյուջեերային հայրի կազմման ժամանակ հաշվի չի առնվել տարեսկզբի ապրանքային մնացորդները, միաժամանակ ԹՆԱՎ վարչության կողմից չի ներկայացվել նաև հիմնավորում բյուջեերային հայրով ներկայացված հանդերձանքի գումարի հաշվարկման համար, որը մեկ անգամ ևս փաստում է հաշվառման գործընթացը թղթային ձևաչափով (մատյաններով և անհատական քարտերով) կազմակերպելու խնդիրների, ռիսկերի և խեղաթյուրումների հավանականության մասին:

Հաշվեքննողի արձագանք 3: Չի ընդունվել, քանի որ արձանագրված դեպքը իրենից ներկայացնում է ապացույց, որ ներքինի հսկողության համակարգում առկա են թերություններ որոնք փաստացի չեն կանխել անհամապատասխանության տեղի ունենալը, իսկ ամբողջական թեստավորման արդյունքում կարող են ի հայտ գալ նույն բնույթի այլ անհամապատասխանություններ ևս:

Ինչ վերաբերվում է դեպքի վայրերում վնասված համազգեստների տրամադրմանը և դրա վերաբերյալ ներկայացված պարզաբանումներին, ապա հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է որ նշված համազգեստի տրամադրումը մինչև 2020թ. մայիս ամիսը իրականացվել է չպահպանելով օրենսդրական պահանջները, ինչը չի կարող վիճարկվել այլ հանգամանքների ներկայացնելով:

Հաշվեքննողի արձագանք 4: Չի ընդունվել, քանի որ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերվում է ոչ թե անվանացանկի ծածկագրերի (CPV կոդերի) միատեսակ անվանումներին, այլ Ֆինանսապատասխանության վարչության (ՀԾ) և ՓԾ ԹՆԱՎ կողմից տրամադրված հաշվետվության անվանումների միջև առկա անհամապատասխանություններին:

Եզրահանգում: Գրասենյակային նյութերի և հագուստի հաշվառման և պլանավորման գործընթացներում առկա են էական ռիսկեր և խնդիրներ: Նախարարության կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 10.08.2017թ. և 30.04.2020թ.՝ «Փրկարարական ծառայության համազգեստի ձևը, տալու կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» թիվ 979-Ն և թիվ 668-Լ որոշումների պահանջները ինչպես նաև չի պահպանվել ՀՀՀՀՀՀ ստանդարտի 26.54 կետով սահմանված պահանջները, նվիրատվության կարգով սրացված նյութական արժեքները մուտքագրվել են պահեստ առանց դրանց իրական արժեքը որոշելու:

5.4 Տրանսպորտային նյութեր

Նախարարությանը «Տրանսպորտային նյութեր» հոդվածով ՀՀ պետական բյուջեից 2020թ. նախատեսվել է հատկացնել 209,173.0 հազ. դրամ (ՓԾ՝ 193,898.2 հազ. դրամ,

ԱԻՆ՝ 15,274.8 հազ. դրամ), որից 9 ամսվա համար՝ 163,659.8 հազ. դրամ (ՓԾ՝ 152,489.6 հազ. դրամ, ԱԻՆ՝ 11,170.2 հազ. դրամ): 2020թ. 9 ամսվա փաստացի ծախսը կազմել է՝ 158,148.0 հազ. դրամ (ՓԾ՝ 147,410.0 հազ. դրամ, ԱԻՆ՝ 10,738.0 հազ. դրամ), իսկ դրամարկղային ծախսը՝ 145,269.8 հազ. դրամ (ՓԾ՝ 137,257.8 հազ. դրամ, ԱԻՆ՝ 8,012.0 հազ. դրամ):

Նախարարության աշխատակազմի ենթակայության տակ գտնվում են թվով 20 տրանսպորտային միջոցներ, այն դեպքում, երբ ՀՀ կառավարության 17.02.2005թ. թիվ 194-Ն որոշմամբ՝ Նախարարության համար ծառայողական մեքենաների թիվ չի սահմանվել:

**Տրանսպորտային նյութերի
հաշվետվության և փաստացի ծախսի
հաշվապահական հաշվառման
տվյալների միջև
անհամապատասխանության չափը
կազմում է 395.5 հազ. դրամ**

Նախարարության «Տրանսպորտային նյութեր» հոդվածի գծով 2020թ. 9 ամիսների փաստացի ծախսը կազմել է 10,738.0 հազ. դրամ, սակայն նախարարության կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ տրանսպորտային նյութերի փաստացի ծախսը կազմել է 11,133.5 հազ. դրամ, տարբերությունը՝ 395.5 հազ. դրամ, ընդ որում համաձայն տրամադրված

տեղեկատվության 2020թ. 9 ամիսների ընթացքում պահեստամասերի գծով ծախս չի իրականացվել:

Համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների՝ «Տրանսպորտային նյութեր» հոդվածի գծով կրեդիտորական պարտքը կազմել է 3,587.7 հազ. դրամ, որից «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ին՝ 3,561.8 հազ. դրամ, «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին՝ 25.9 հազ. դրամ:

Նախարարությունն ավտոմեքենաների շահագործման նպատակով 2020թ. 9 ամիսների ընթացքում ձեռք է բերել 37,193 լիտր բենզին 11,542.0 հազ. դրամ արժեքով, այդ թվում՝ 33,313 լիտրը՝ ռեզուլյար տեսակի 10,277.0 հազ. դրամ արժեքով և 3,880 լիտրը՝ պրեմիում տեսակի 1,266.0 հազ. դրամ արժեքով: Բացի այդ՝ ԱԻՆ-ը փրկարար ծառայությունից տրամադրվել է 800լ դիզ. վառելիք 312.0 հազար դրամ արժեքով:

Նախարարության վառելիքի բաշխումն իրականացվել է հետևյալ կերպ. յուրաքանչյուր ամիս կամ եռամսյակ գլխավոր քարտուղարի կողմից հաստատված բաշխման ցուցակներով ըստ սահմանված չափաքանակների վառելիքը տրամադրվել է ԱԻՆ ղեկավարությանը և ստորաբաժանումներին (անհրաժեշտության դեպքում տրամադրվել է նաև ըստ զեկուցագրերի): Այնուհետև, տվյալ ամսվա կամ եռամսյակի ավարտից հետո կազմվել է վառելիքի ծախսի վերաբեյալ ամփոփ հաշվետվություն և ծախսը հիմնավորող փաստաթղթերի (ուղեգրերի) հետ միասին ներկայացվել է հաշվապահական հաշվառման բաժին:

«Տրանսպորտային նյութեր» հոդվածի ծախսերի արժանահավատության գնահատման նպատակով հաշվեքննության ստանդարտներին համապատասխան

կատարված ընտրանքային ստուգման արդյունքում արձանագրվել է հետևյալ թերությունները և անհամապատասխանությունները.

**Տրանսպորտային նյութերի
ծախսը հիմնավորող
փաստաթղթերը կամ բացակայում
են, կամ մեծմասամբ թերի են
լրացվել**

- Ծախսը հիմնավորող փաստաթղթերը թերի են լրացվել, մասնավորապես ընտրված գործարքների հիմք հանդիսացող բոլոր ուղեգրերի հերթական համարները բացակայել են, 12 ուղեգրերից լրացված չեն 8-ի

ամսաթիվը և կազմակերպության դրոշմակնիքը, 5 ուղեգրի՝ վառելիքի մնացորդը և այլն:

- Հեռաչափի ցուցմունքները 10-ից 6-ի դեպքում սահմանված կարգով լրացված չեն, 10-ից 7-ի դեպքում՝ լրացված չեն երթուղիները և դրանց համարժեք վազքը, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու հատկացված վառելիքի և փաստացի ծախսի համապատասխանությունը:
- Հաշվապահական հաշվառման բաժնի կողմից ներկայացված վառելիքի ծախսը հիմնավորող փաստաթղթերի մի մասում բացակայել է ԱԻՆ աշխատակազմի հերթապահ ծառայողական ավտոմեքենաների 2020թ. մայիսից սեպտեմբեր ամիսների վառելիքի ամսական բաշխման ցանկը և մարտ ամսվա վառելիքի ծախսի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը:
- Արժանահավատ չէ Հրդեհային և տեխնիկական անվտանգության հետաքննության վարչության մեքենաների վառելիքի ծախսի վերաբերյալ հաշվետվությունը: Յուրաքանչյուր մեքենային, անկախ ավտոմեքենայի մակնիշից, հատկացվում է ամսական 100լ բենզին, իսկ վառելիքի ամսական փաստացի ծախսը հիմնավորող փաստաթղթերում յուրաքանչյուր մեքենայի կատարած վազքը բոլոր ամիսներին նույն թիվն է. ամսական կտրվածքով ոչ մի մեքենա չունի ոչ գերածախս, ոչ էլ տնտեսում: Այսպիսով, վերոնշյալ վարչության մեքենաներին ամսական տրամադրվել է 100լ բենզին և ճիշտ նույնքանն էլ ծախս է ճանաչվել:

ԱԻՆ դիրքորոշում 1: Արտակարգ իրավիճակների նախարությանը սպասարկող ծառայողական ավտոմեքենաների 2020թ. ուղեգրերի բացակայող հերթական համարները և ամսաթվերը լրացվել են, դրոշմակնիքները դրվել, վառելիքի մնացորդները առկայության դեպքում նշվում են:

Երթուղիները չեն լրացվում միայն նախարարի, փոխնախարարների և գլխավոր քարտուղարին սպասարկող ավտոմեքենաների համար: Սակայն վազքաչափի ցուցմունքները միանշանակորեն լրացվում են, որով և որոշվում է վառելիքի նորմատիվ և փաստացի ծախսի համապատասխանությունը:

ԱԻՆ դիրքորոշում 2: Նախարարությանը սպասարկող ծառայողական հերթապահ ավտոմեքենաների 2020թ. մայիսից սեպտեմբեր ամիսների վառելիքի բաշխման ցանկերը և մարտ ամսվա վառելիքի ծախսի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը առկա են:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության հետաքննության վարչության ավտոմեքենաների վառելիքի իրական պահանջարկը շատ ավելին է քան հատկացվող 100-ական լիտր սահմանաքանակները, ուղղակի դրանք հաստատվում են հնարավորությունից ելնելով: Վերը նշված պատճառով էլ ավտոմեքենաների վազքը նույնն է և հատկացված վառելիքի չափաքանակի մասով չկա ոչ տնտեսում, ոչ էլ գերաժախս:

Հաշվեքննողի արձագանք 1: Չի ընդունվել, քանի որ ուղեգրերի հերթական համարները, ամսաթվերը և այլ տվյալները անհրաժեշտ էր լրացնել ուղերթի ժամանակ, այլ ոչ թե հետո միայն: Ինչ վերաբերվում է հեռաչափի ցուցմունքները և ուղերթերը չլրացնելուն, ապա դրանք չեն վերաբերվում միայն ԱԻՆ դիրքորոշման մեջ մարտնչած ծառայողական ավտոմեքենաներին:

Հաշվեքննողի արձագանք 2: Չի ընդունվել, քանի որ վառելիքի ծախսը հիմնավորող նշված փաստաթղթերը հաշվեքննությունն իրականացնող պաշտոնատար անձանց չի տրամադրվել, ինչպես նաև չի ներկայացվել ԱԻՆ դիրքորոշումը ներկայացնող գրությանը կից: Ինչ վերաբերվում է Հրդեհային և տեխնիկական անվտանգության հետաքննության վարչության ավտոմեքենաների վառելիքի ծախսի վերաբերյալ ներակայացված դիրքորոշմանը, ապա այն ևս չի ընդունվել, քանի որ նախ և առաջ «վառելիքի իրական պահանջարկը շատ ավելին է քան հատկացվող 100-ական լիտր սահմանաքանակները» գնահատականը զուրկ է իրավական հիմնավորումներից, և վառելիքի հատկացումը պետք է կատարվի համաձայն ուղեգրի և փաստացի ծախսի, անկախ նրանից դրա պահանջարկը հատկացվող քանակից ավելին է թե պակաս:

Եզրահանգում: Տրանսպորտային նյութեր հոդվածի ծախսերի հաշվառման գործընթացնում առկա են էական ռիսկեր և խնդիրներ: Մասնավորապես՝ ծախսը հիմնավորող փաստաթղթերը կամ բացակայում են, կամ մեծամասամբ թերի են լրացված: ԱԻՆ կողմից ներկայացված տրանսպորտային նյութերի վերաբերյալ հաշվետվությունը չի համապատասխանում փաստացի ծախսի հաշվապահական հաշվառման տվյալներին՝ անհամապատասխանության չափը կազմում է 395.5 հազ. դրամ:

5.5 Ներքին գործուղումներ

Նախարարությանը ներքին գործուղումների համար Պետական բյուջեից 2020թ. ինն ամիսների համար նախատեսվել է հատկացնել 2,024.90 հազ. դրամ, փաստացի և դրամարկղային ծախսերը կազմել են 446.90 հազ. դրամ:

«Փրկարար ծառայության» ծրագրով ներքին գործուղումների համար 2020թ. ինն ամիսների համար նախատեսվել է հատկացնել 27,790.30 հազ. դրամ, փաստացի և դրամարկղային ծախսերը կազմել են 13,727.87 հազ. դրամ:

Բոլոր գործուղումների համար բացակայում է հաշվետվությունը իսկ 14,174.77 հազ. դրամ վճարումները կատարվել են գործուղումից հետո

ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 9-րդ կետի համաձայն՝ գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատողը պարտավոր է ներկայացնել գործուղման վկայականը, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը, գործուղման ծախսերը

հաստատող փաստաթղթերը: 2020թ. ինը ամիսներին իրականացված բոլոր

գործողությունների համար բացակայում է գործուղված անձանց փաստացի ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը:

Միաժամանակ, Նախարարության կողմից չի պահպանվել նաև ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 9-րդ կետի առաջին մասով սահմանված պահանջը, որի համաձայն՝ գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը տրվում է գործուղում մեկնելուց առնվազն մեկ օր առաջ: 2020թ. ինն ամիսների բոլոր վճարումները կատարվել են գործուղումից հետո:

ԱԻՆ դիրքորոշում: Տեղեկացնում եմ, որ ՀՀ ԱԻՆ աշխատակիցները գործուղումից հետո կներկայացնեն փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը:

Հաշվեքննողի արձագանք: Ընդունվել է ի գիտություն և կիրականացվի հետհսկողություն:

Եզրահանգում: Նախարարության կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 9-րդ կետի պահանջները, որի հետևանքով առաջացած անհամապատասխանության ընդհանուր չափը կազմում է՝ 14,174.77 հազ. դրամ:

5.6 Նախարարության կարիքների համար իրականացված գնումների վերաբերյալ

ՀՀ ՀՊ կողմից Նախարարությունում 2020թ. պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների նկատմամբ իրականացված հաշվեքննության հետհսկողական գործընթացի վերաբերյալ.

- **Արձանագրված անհամապատասխանությունը:** Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2020թ. առաջին կիսամյակում բոլոր պայմանագրերի հանձնման-ընդունման գործընթացը չի կազմակերպվել էլեկտրոնային համակարգի միջոցով, և էլեկտրոնային գնումների համակարգում բացակայել են պատասխանատու ստորաբաժանման կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված եզրակացությունները և հանձնման-ընդունման արձանագրությունները, իսկ Նախարարությունը չի պահպանել ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 110-րդ կետի պահանջները՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

Հետհսկողական գործընթացի արդյունքները: 2020թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության շրջանակներում պարզվել է, Նախարարության կողմից պայմանագրերի հանձնման-ընդունման գործընթացը դեռևս չի իրականացվում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

Նախարարության կարիքների համար 2020թ. ինը ամիսների ընթացքում կնքվել է թվով 145 պայմանագիր՝ 674,408,421.1 հազ. դրամ ընդհանուր արժեքով, իսկ փաստացի ծախսը կազմել է 441,927,968.1 հազ. դրամ:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 17-րդ կետի՝ Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին

համապատասխան հաստատված, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է: Միաժամանակ նույն որոշման 16-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:

Գնման ընթացակարգերը կազմակերպվել են առանց հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակելու, իսկ պատասխանատու ստորաբաժանումը սահմանվել է չպահպանելով օրենսդրական պահանջները

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Նախարարությունը, չպահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման պահանջները, առանց հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակելու 2020 թվականի կարիքների համար հայտարարել է ԲՄԱՊՁԲ-ԱԻՆ-20/1 ծածկագրով վառելիքի ձեռքբերման, ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/2 ծածկագրով ավտոմեքենաների շարժիչի յուղերի ձեռքբերման, և ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/3 ծածկագրով տնտեսական,

սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման մրցույթներ:

Նախարարության կողմից չի պահպանվել նաև ՀՀ կառավարության 13.04.2017թ. թիվ 390-Ն որոշման պահանջները, և 2020թ. գնումների պլանը հրապարակել է տեղեկագրում՝ հաստատված Նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրությամբ, մինչդեռ վերոնշյալ որոշման 5-րդ կետի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանը հաստատվում է յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ՝ առանձին հավելվածով:

Չի պահպանվել նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 20-րդ կետ պահանջները, համաձայն որի՝ Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝ պատասխանատու ստորաբաժանում, և գնումները համակարգող, իսկ նույն որոշման 16-րդ կետի համաձայն Գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հրապարակման օրն է:

ԱԻՆ դիրքորոշում 1: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով գնումների պլանի բնօրինակը առկա է, ինչպես նաև գնման առարկաները ներառված են էլեկտրոնային գնումների PPCM համակարգի գնումների ընթացիկ պլան բաժնում:

ԱԻՆ դիրքորոշում 2: Գնումների պլանը հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ առանձին հավելվածով, գնումների պլանում փոփոխություն կատարվել է նույն որոշման հավելված 12-ով սահմանված Կարգի 3-րդ կետի համաձայն:

ԱԻՆ դիրքորոշում 3: 2020 թվականի գնումների պլանի հաստատումից հինգ աշխատանքային օրվա ընթացքում կազմավորվել է պատասխանատու ստորաբաժանում և գնումները համակարգող, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հայտարարված

ընթացակարգերի գնման հայտերը ներկայացվել են 2019 թվականի հունվարին կազմավորված պատասխանատու ստորաբաժանումների կողմից:

Հաշվեքննողի արձագանք 1: Չի ընդունվել, քանի որ ինչպես նշված է՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը հրապարակված գնումների պլանի առկայությունն է, այլ ոչ թե միայն բնօրինակի առկայությունը:

Հաշվեքննողի արձագանք 2: Չի ընդունվել, քանի որ խոսքը վերաբերվում է ոչ թե գնումների պլանում փոփոխություններ կատարելուն, այլ նախքան ՀՀ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին որոշումը գլխավոր քարտուղարի կողմից գնումների պլանը հաստատելուն:

Հաշվեքննողի արձագանք 3: Չի ընդունվել, քանի որ պատասխանատու ստորաբաժանումը սահմանվում է ոչ թե հաշվետու տարվա՝ այլ տվյալ գնման ընթացակարգի համար, և պատասխանատու է ամբողջ ընթացակարգի համար՝ գնման հայտի կազմումից մինչև պայմանագրի արդյունքների ընդունումը:

Հաշվեքննիչ պալատի նախագահ՝

Լ. Յոլյան